

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2017 թվականի ութ ամիսների կատարման մասին:

Ձեկնուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Շիրակի մարզի համայնքների 2017 թվականի բյուջեների սեփական եկամուտների ութ ամիսների հավաքագրման արդյունքների մասին:

2017թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 85.8%-ով, նախատեսված 1,291,627.4 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 1,108,171.8 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 183,455.6 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2017թ. բյուջեների ութ ամիսների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2017թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+, -/	կատ. %
Հողի Հարկ	217,931.2	169,322.4	- 48,608.8	77.7
Գույքահարկ	501,570.3	424,027.6	- 77,542.7	84.5
Պետական տուրք	32,986.7	30,184.0	- 2,802.7	91.5
Տեղական տուրք	89,887.7	78,043.7	- 11,844.1	86.8
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	221,927.7	175,025.4	- 46,902.3	78.9
ա/ հողի վարձավճար	190,439.4	142,108.5	- 48,330.9	74.6
բ/ գույքի վարձավճար	31,488.3	32,916.9	1,428.6	104.5
Այլ եկամուտներ	227,323.8	231,568.9	4,245.1	101.9
Ընդամենը սեփական եկամուտներ	1,291,627.4	1,108,171.8	- 183,455.6	85.8

2017թ. ութ ամիսների փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2016թ. համեմատությամբ կազմում է 16.5% կամ ավել է հավաքագրվել 156,623.7 հազ. դրամ:

Հստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

h/h	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2017թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+, -/	կատ. %
1	Ամասիա	48,090.8	50,206.7	2,115.9	104.4
2	Արթիկ	197,366.2	183,339.2	- 14,027.0	92.9
3	Աշոցք	61,077.1	46,622.4	- 14, 454.7	76.3
4	Ախուրյան	202,308.7	152,256.7	- 50,052.0	75.3
5	Անի	104,107.2	64,079.7	- 40,027.5	61.6

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2017թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Անիի տարածաշրջանում՝ 61.6%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 63.4% կամ նվազման տոկոսը կազմում է 1.8, սակայն գումարային աճը կազմել է 2,709.3 հազ. դրամ:

Մարզի քաղաքային համայնքները 2017թ. սեփական եկամուտները կատարել են՝ Գյումրի քաղաքը՝ 90.1%, Արթիկ քաղաքը՝ 106.3%, Մարալիկ քաղաքը՝ 69.5%:

Մարզի թվով 52 համայնքներ չեն ապահովել 2017թ. արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 85.8%-ը, այդ թվում թվով 10 համայնքներ չեն ապահովել սեփական եկամուտների կատարման նույնիսկ 50.0 %-ի ցուցանիշը:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:

ՀՀ պետական բյուջեով 2017 թվականին ութ ամիսներին նախատեսված 2,942,226.8 հազ. դրամ <<Դոտացիան>> և 22,386.4 հազ. դրամ <<Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաները)>> ամբողջությամբ ֆինանսավորվել է:

ՀՀ Շիրակի մարզի համայնքները 2017 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ աշխատավարձերի գծով պարտքը կազմել է 10,023.2 հազ. դրամ, այդ թվում՝ ընթացիկ պարտք է կուտակել Հովունի համայնքը գումարով 1,417.5 հազ. դրամ, իսկ նախորդ տարիներից կուտակված պարտքերը կազմում են ընդամենը 8,605.7 հազ. դրամ, որից՝ Հովունի 7,765.7 հազ. դրամ և Լուսադրյուր 840.0 հազ. դրամ:

2. Մարզի համայնքներում բերքահավաքի ընթացքի, աշնանացանի նախապատրաստական աշխատանքների և բնապահպանական խնդիրների մասին:

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մովսես Մանուկյան

ՀՀ Շիրակի մարզում 2017թ. բերքահավաքի ընթացքի, աշնանացանի նախապատրաստական աշխատանքների և բնապահպանական խնդիրների վերաբերյալ

2017թ. մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ տեսքը.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն		Աճ կամ նվազում
		/հա/		/հա/
		2016թ.	2017թ.	
1.	Հացահատիկ	48517	41996	-6521
	այդ թվում՝ աշնանացան ցորեն	27367	21729	-5638
	գարնանացան գարի	21150	20267	-883
2.	Կարտոֆիլ	4568	3721	-847
3.	Բանջարեղեն	1900	1758	-142
4.	Կերային մշակաբույսեր	15561	12980	-2671
5.	Տեխնիկական մշակաբույսեր	129	171	+42
Ընդամենը		67401	70773	-10139

2017թ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2016թ. համեմատ պակասել է **10139** հա-ով:

Աշնանացան ցորենի ցանքատարածությունների նվազման պատճառ է հանդիսացել 2016թ. սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրի դադարեցումը, իսկ կարտոֆիլի ցանքատարածությունների նվազումը կապված է նախորդ տարվա բերքի իրացման ընթացքում ծագած բարդությունների հետ (բերքը չարտահանվեց Վրաստանի Հանրապետություն):

Համախառն բերք՝ 2016-2017.թթ

հ/հ	Մշակաբույսի անվանումը	Համախառն բերք		
		/տ/		
		2016թ.	2017թ. /կանխատեսվող/	Աճ/նվազում (+/-)

1.	Հացահատիկ	157463	60000	-85963
2.	Կարտոֆիլ	117997	95000	-43577
3.	Բանջարեղեն	56614	52000	-16614
4.	Պտուղ	8056	7000	-1056
5.	Խոտ	142281	55000	-82281
Ընդամենը		482411	269000	-213411

Հացահատիկի բերքահավաք.

Ցանվել է հացահատիկ **41996** հա, 06.09.2017թ. դրությամբ հնձվել է **41746** հա, մնացել է հնձելու **250** հա, միջին բերքը՝ աշնանացան ցորեն **10-15** ց, գարնանացան գարի **10-12** ց :

Կարկտահարության և անջրդի տարածքներում ջերմային բարձր ֆոնի և տեղումների բացակայության պատճառով մեծ վնասներ կրեցին հիմնականում հացահատիկային կուլտուրաները: Կարկտահարության պատճառով մարզում տուժել են թվով 12 համայնքների 3177.5 հա ցանքատարածություններ, վնասի չափը կազմել է 495.7 մլն դրամ: Ջերմային բարձր ֆոնի և տեղումների բացակայության պատճառով շատ համայնքներում հացահատիկի միջին բերքը նախորդ տարվա 25-30 ց-ի դիմաց կազմել է 10-15 ց, իսկ Անիի տարածաշրջանի ցածրադիր գոտու համայնքներում միջին բերքը կազմել է 3-5 ց, նույնիսկ կան տարածքներ որտեղ բերքահավաք չի իրականացվել (Բագրավան):

Ներկա պահին շատ համայնքների գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում առաջացել է որակյալ սերմացուի պահանջարկ: Սերմնաբուծության եւ սերմարտադրության ծրագրում ընդգրկված տնտեսություններում առկա է ինչպես էլիտա /1կգ 180 դրամ/ այնպես էլ առաջին վերարտադրության /1կգ 160 դրամ/ աշնանացան ցորենի բարձրորակ սերմացուներ;Մարզում շարունակվում է նաեւ ՀՀ կառավարության կողմից իրականացվող աջակցության ծրագրերը /պարարտանյութեր, դիզ. վառելիք եւ սերմացուներ:

Բերքահավաքի ամփոփ տվյալները

Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/			Միջին բերք /ց/			Համախառն բերք /տ/		
	2015թ.	2016թ.	2017թ.	2015թ.	2016թ.	2017թ. /կանխատեսվո ղ/	2015թ.	2016թ.	2017թ. /կանխատեսվո ղ/
Հացահատիկ	46665	48517	41996	32.4	33.1	14.3	151238	157000	60000
Կարտոֆիլ	4384	4568	3721	260.1	259	250.5	114023	117997	95000
Բանջարեղեն	1729	1900	1758	319.4	298.8	295	55236	56614	52000

Ուոռզում.

Ջրամբարների լցվածությունը 07.09.2017թ. դրությամբ.

Հ/Հ	Զրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ3/	Լցվածությունը առ 07.09.2016թ. /մլն մ3/	Լցվածությունը առ 07.09.2017թ. /մլն մ3/	Ճ/նվազում /մլն մ3/
1	Ախուրյան	525	121,06	2,51	-118,55
2	Արփի լիճ	105	32,8	11,1	-21,7
3	Կառնուտ	22.6	9,77	3,17	-6,6
4	Մառնաղբյուր	4.8	0.75	0.44	-0,31
5	Վարդաքար	5	1.37	0.64	-0.73
6	Թավշուտ	6	1,41	0.25	-1,16
7	Մանթաշ	8.2	4.45	2.31	-2.14
8	Ջաջուռ	0.28	0.22	0.21	-0.01
Ընդամենը		151.88	59.5	36.82	-32,65

Ոռոգման նպատակով օգտագործված ջրերի և գումարների հավաքագրումների օպերատիվ տվյալները 2017թ. (ըստ <<Շիրակ>> ՋՕԸ-ի)

Հ/Հ	Ցուցանիշները	Քանակը	Զափի միավորը
1	Զբառ	16759.0	հազ. մ3
2	Զրտուք	8212.1	հազ. մ3
3	Հասույթ	90333.1	հազ. դրամ
4	Գանձում	80295.4	հազ. դրամ
5	Գանձման տոկոս	89	%

Մարզում ոռոգումը կազմակերպվում է «Շիրակ» ՋՕԸ-ի կողմից, որի սպասարկման տարածքների ոռոգման համակարգերը հիմնականում գտնվում են անմխիթար վիճակում, համակարգում ջրի կորուստը հասնում է 50-60 %-ի, մի շարք համայնքներում բացակայում է ոռոգման ներտնտեսային ցանցերը, որի հետևանքով մեծ են ջրի կորուստները, ոռոգման ջրի մատակարարման լուրջ խնդիրներ կան Մանթաշի ջրամբարից սնվող Արթիկի տարածաշրջանի համայնքներում: Մարզի 78163 հա վարելահողերից ոռոգելի է 20100 հա, որից 2017թ. փաստացի ոռոգվել է շուրջ 4000 հա (կազմում է 20 %) նախորդ տարվա 3050 հա-ի դիմաց, ինչը ցածր ցուցանիշ է ինտենսիվ երկրագործություն վարելու համար:

Ներկայումս քննարկման փուլում է մարզի տարածքում փոքր ծավալով ջրամբարների կառուցման հայեցակարգը / Արթիկ, Լեռնակերտ, Նահապետավան, Սարալանջ/:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Չնայած վերջին տարիներին մարզում իրականացված և ընթացքի մեջ գտնվող ծրագրերի առկայությանը Էկոլոգիական իրավիճակը դեռևս հեռու է բավարար համարվելուց: Շրջակա բնական միջավայրի և նրա առանձին տարրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պահպանության ոլորտում դեռևս առկա են բազում հիմնախնդիրներ, որոնք ըստ առանձին բնական միջավայրերի հետևյալն են.

Անտառների պահպանություն. Շիրակի մարզը, կախված իր բնակլիմայական պայմաններից, հանդիսանում է հանրապետության ամենասակավանդատ մարզը: Համեմատության համար նշենք, որ անտառային պետական ֆոնդը կազմում է հանրապետության տարածքի 11.2%-ը, իսկ Շիրակի մարզում այն կազմում է ընդամենը 1%: Անտառապատկան շուրջ 4660 հա տարածքներից ներկայումս տնկարկներ կան ընդամենը 2033 հա վրա: Վերջին տարիներին մարզում որոշակի աշխատանքներ են կատարվել անտառավերականգնման և նոր անտառների հիմնման ուղղությամբ: Գյումրու, Արթիկի, Լեռնակերտի, Մառնադբյուրի, Աշոցքի և Զաջուռի տեղամասերում այդ տարիների ընթացքում հիմնվել է շուրջ 160հա նոր անտառազանգված: «ԷՅ-ԹԻ-ՓԻ» բարեգործական հիմնադրամի «Հայաստան ծառատունկ» ծրագրի շրջանակներում մարզում իրականացվել և ընթացքի մեջ են համայնքային անտառների հիմնման աշխատանքներ մարզի 21 համայնքներում՝ ավելի քան 35 հա ընդհանուր մակերեսով: Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման նախարարության և Ավստրիայի Զարգացման գործակալության համատեղ ֆինանսավորմամբ մարզում իրականացվում է «Հողերի էրոզիայի ինտեգրացված վերահսկողություն Հարավային Կովկասի լեռնային տարածքներում» ծրագիրը, որի շրջանակներում Շիրակի մարզի Սարալանջ, Փոքր Մանթաշ, Մեծ Մանթաշ և Նահապետավան համայնքներում իրականացվել և ընթացքի մեջ են շուրջ 50 հա տարածքի վրա համայնքային անտառների հիմնման աշխատանքներ: Աշնանային տունկի ընթացքում 13 հա տարածքի վրա անտառատնկարկ կստեղծվի նաև Հադիձ համայնքում:

Ինչպես հայտնի է Հանրապետության տարածքում վերջերս տեղի ունեցան խոշոր անտառային հրդեհներ, որոնց հետևանքով ոչնչացվեցին մեծաքանակ անտառազանգվածներ: Անմասն չմնաց նաև Գյումրու անտառտնտեսությունը, որի «Սեվերսկի» տեղամասում ծագած հրդեհի հետևանքով այրվեց ավելի քան 20հա անտառապատ տարածք: Օգտվելով առիթից ևս մեկ անգամ կոչ եմ անում անտառամերձ համայնքների ղեկավարներին և ազգաբնակչությանը առավել մեծ ուշադրություն դարձնել անտառային տարածքներում հրդեհների կանխարգելմանը և հրդեհների առաջանալու դեպքում օժանդակել ԱԲՆ ջոկատներին աշխատանքները առավել օպերատիվ կազմակերպելու համար:

Զրային ռեսուրսների պահպանություն. Ռելիեֆի, կլիմայի և ջրաերկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունների շնորհիվ Շիրակի մարզի տարածքն աչքի է ընկնում համեմատաբար թույլ զարգացած ջրագրական ցանցով: Մարզի տարածքում ձևավորվում է շուրջ 420 մլն մ³ մակերեսությամբ հոսք /հանրապետության տարածքում առաջացող գետային հոսքի 5.9%/, մինչդեռ ջրի պահանջը հողերի ոռոգման ու ջրամատակարարման համար կազմում է 8%:

2017 թվականի խիստ չորային կլիմայական պայմանները իրենց բացասական ազդեցությունն ունեցան ջրային ռեսուրսների կուտակման և արդյունավետ օգտագործման գործընթացի վրա: Վերջինիս պատճառով աննախադեպ ջրթող իրականացվեց Ախուրյանի ջրամբարից, որի հետևանքով ոչնչացվեց մեծ քանակությամբ ձկնատեսակներ: Այս պահի դրությամբ 525 մլն. մ³ ծավալ ունեցող ջրամբարում առկա է 2.5 մլն. մ³ ջուր: Գրեթե նույն իրավիճակն է տիրում «Արփի-լիճ» ջրամբարում, որտեղ մնացած ջրի ծավալը ավելի քիչ է քան «մեյոյա» ծավալը: 8.09.2017թ դրությամբ այնտեղ մնացել է ընդամենը 11 մլն. մ³ 15մլն. մ³ –ի փոխարեն:

Ընդերքօգտագործում. Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում մեծ դեր ունի ընդերքօգտագործման ոլորտը, որտեղ ներգրավված են թվով 65 կազմակերպություններ, որոնք հիմնականում զբաղված են տարատեսակ շինանյութերի՝ բազմերանգ տուֆերի, ֆելզիտների, բազալտների, անդեզիտների, դալիտների, հրաբխային խարամների, պեմզայի և ավազների, արդյունահանմամբ: Պահանջարկ և հնարավորություններ չլինելու պատճառով դրանցից շուրջ երկու տասնյակը չեն գործում, իսկ մնացածը գործում են թեր ծանրաբեռնվածությամբ: Մարզի Աշոցքի, Ախուրյանի, Արթիկի տարածաշրջաններում առկա են նաև հանքային ջրաղբյուրներ, իսկ Ամասիայի տարածաշրջանում՝ մետաղական օգտակար հանածոների հանքերնակումներ /պղնձի, նիկելի, ոսկու, երկաթի, կոբալտի և այլն/, որոնց հետագա ուսումնասիրությունը և արդյունաբերական գնահատումը մեծ նշանակություն կունենա մարզի տնտեսության հետագա զարգացման համար:

Էներգաարդյունավետություն. ՀՀ Շիրակի մարզը մեկն է Հայաստանի Հանրապետության այն մարզերից, որտեղ առկա է վերականգնվող էներգետիկայի բավականին լուրջ պոտենցիալ, հիդրոէներգետիկայի, արեգակնային և հողմային էներգիայի, կենսագազի ստացման և օգտագործման ոլորտներում: Մարզում գործում

են թվով ութ ՓՀԷԿ-եր, ուսումնասիրությունների փուլում է գտնվում հողմային էներգիայի օգտագործման հնարավորությունը Քարախաչի լեռնանագրում:

Վերջին մեկ-երկու տարիների ընթացքում մարզում լուրջ առաջընթաց է գրանցվել արեգակնային էներգիայի օգտագործման ոլորտում: Միջազգային ծրագրերի աջակցությամբ մարզում իրականացվել են արեգակնային էներգիայի կիրառմամբ տարբեր ծրագրեր՝ արևային էլեկտրակայան, տաք ջրամատակարարման արևային համակարգ, էներգաարդյունավետ փողոցային լուսավորություն, ջերմոցի ջեռուցման արևային օդատաքացուցիչ համակարգ, չորանոց, կաթիլային ոռոգման համակարգ և այլն:

Մարզի Բասեն համայնքում իրականացվում է կենսազանգվածից գազ ստանալու ծրագիր: Արդեն ավարտին են հասցվել համակարգի մոնտաժման աշխատանքները և սկսվել է գործարկման փուլը: Այս համակարգի կիրառումից ստացված դրական արդյունքները հնարավորություն կստեղծեն մարզի մյուս անասնապահական տարածաշրջաններում ևս կիրառել նման համակարգեր:

2017թ. անցած ամիսների ընթացքում Գյումրու «Կանաչ Տեխնոլոգիաների Հայկական Կենտրոն»-ի կողմից «Թռչունյաց տուն» բարեգործական կենտրոնում կառուցվել են 16 կվտ, Հայկական համայնքում՝ 5.5 կվտ, Թորոսգյուղ համայնքի «Մանկական ճամբարում»՝ 20 կվտ, Գուսանազյուղ համայնքում՝ 5 կվտ հզորությամբ արևային էլեկտրակայաններ, իսկ Գյումրու «Բեռլին» հյուրանոցում՝ 1 տ տարողությամբ արևային ջրատաքացուցիչ:

Հիմնախնդիրներ և լուծման ուղիներ.

Անտառների պահպանություն. Շիրակի մարզը, կախված իր բնակլիմայական պայմաններից, հանդիսանում է հանրապետության ամենասակավանդատ մարզը: Համեմատության համար նշենք, որ անտառային պետական ֆոնդը կազմում է հանրապետության տարածքի 11.2%-ը, իսկ Շիրակի մարզում այն կազմում է ընդամենը 1%: Անտառների պակասը բերել է կլիմայի խիստ չորայնության և էրոզիոն երևույթների ակտիվացման:

Առաջարկվում է՝

Կատարել մարզի անտառների գույքագրում, տարածքների ճշգրտում, մշակել անտառվերականգնման և նոր անտառների հիմնման ծրագրեր յուրաքանչյուր տարի շուրջ 40-50հա տարածքների համար:

Ջրային ռեսուրսների պահպանություն. Շիրակի մարզի տարածքն այժմ է ընկնում համեմատաբար թույլ զարգացած ջրագրական ցանցով: Մարզի տարածքում ձևավորվում է շուրջ 420 մլն խոր. մ մակերևութային հոսք /հանրապետության տարածքում առաջացող գետային հոսքի 5.9%/, մինչդեռ ջրի պահանջը հողերի ոռոգման ու ջրամատակարարման համար կազմում է 8%: Մարզում չեն գործում կոյուղաջրերի մաքրման կայաններ:

Առաջարկվում է՝

ա/ Շարունակել և ավարտին հասցնել Կապսի ջրամբարի կառուցումը, ինչպես նաև նախատեսել փոքր ջրամբարների կառուցման ծրագրեր:

բ/ Ստեղծել մարզի հանքային ջրադիուրների օգտագործման համար բարենպաստ բիզնես միջավայր:

գ/ Վերագործարկել կամ նորովի կառուցել կոյուղաջրերի մաքրման Գյումրու, ինչպես նաև Արթիկի մաքրման կայանները:

դ/ Մանթաշի ջրամբարին և հարակից տարածքներին շնորհել բնության հատուկ պահպանվող ջրաբանական տարածքի կարգավիճակ:

Ընդերքօգտագործում. Շիրակի ընդերքօգտագործման ոլորտում ներգրավված թվով 65 կազմակերպություններից շուրջ երկու տասնյակը չեն գործում պահանջարկ և հնարավորություններ չլինելու պատճառով, իսկ մնացածը գործում են թերձանրաբեռնվածությամբ, առկա է քարհատ մեքենաների

մաշվածության հիմնախնդիրը: Անհրաժեշտ է մետաղային օգտակար հանածոների հանքերնակումների շրջանում իրականացնել երկրաբանահետախուզական և արդյունաբերական գնահատման աշխատանքներ:

Առաջարկվում է՝

ա/ Օժանդակել ընդերքօգտագործման ոլորտում ընդգրկված կազմակերպություններին արդյունահանման նոր տեխնոլոգիաների ձեռք բերման գործում:

բ/ Աշխատանք տանել մետաղային օգտակար հանածոների հանքերնակումների շրջանում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար միջոցներ ձեռք բերելու ուղղությամբ:

Էներգաարդյունավետություն. ՀՀ Շիրակի մարզը մեկն է Հայաստանի Հանրապետության այն մարզերից, որտեղ առկա է վերականգնվող էներգետիկայի բավականին լուրջ պոտենցիալ, հիդրոէներգետիկայի, արեգակնային և հողմային էներգիայի, կենսագազի ստացման և օգտագործման ոլորտներում, սակայն այդ ռեսուրսների օգտագործումը խիստ անբավարար է:

Առաջարկվում է՝

ա/ Մշակել և իրականացնել այլընտրանքային էներգակիրների օգտագործմամբ ցուցադրական ծրագրեր, դրանց վերաբերյալ տեղեկատվությունը տարածել և լուսաբանել:

բ/ Աջակցել Գյումրու <<Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոնին>> այդ ոլորտի երիտասարդ մասնագետներ պատրաստելու հարցում,

գ/ Խթանել այլընտրանքային էներգակիրների օգտագործմամբ ծրագրերի մշակման ծրագրերը, ինչպես նաև աջակցել միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցներով դրանց իրականացմանը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

3. 2017-2018 ուսումնական տարում մարզի հանրակրթության ոլորտում իրականացված աշխատանքների, առկա խնդիրների և հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հաշվառման մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ 2016-2017 ՈՒՍՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մարզում գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների թվային տվյալները, աշակերտների թիվը

1. Մարզում գործում են 163 պետական հանրակրթական դպրոցներ, որոնցից 4-տարրական, 41-հիմնական, 102-միջնակարգ, 2-հատուկ, 1-երեկոյան, 10-ավագ, 3-վարժարան:

Մարզում գործող պետական դպրոցների թիվը	Մարզային ենթակայության դպրոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության դպրոցներ	
166	149		14

	Տարրակա ն	Հիմնակա ն	Միջնակ արգ	Հա տուկ	Երեկո յան	Վարժար ան	Ավագ	Միջնակարգ
	4	41	101	2	1	3	10	1

Աշակերտների թիվն ըստ ուսումնական տարիների

Ուսումնական տարի	2014-2015	2015-2016	2016-2017	2017-2018
Աշակերտների թիվը/մարզային ենթակայության դպրոցների/	25123	25673	25725	26049
Առաջին դասարանցիների թիվը	3215	3229	3195	3011
Շրջանավարտների թիվը	1172	1147	1044	818

2. Ատեստավորված ուսուցիչների թիվը

Կրթության որակի բարձրացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է մանկավարժներին: Որակյալ և ժամանակի պահանջներին համապատասխան կրթական ծառայություններ մատուցելու նպատակով 2017 թվականին իրականացվել է 750 ուսուցչի մասնագիտական առարկայական նախատեստացիոն վերապատրաստում:

3. Տարակարգ ստացած ուսուցիչների թիվը

Տարակարգ ստացել են 26 ուսուցիչներ:

4. Մարզում իրականացվող ծրագրեր /նախադպրոցական միկրոծրագրեր, միջոցառումներ/

Մարզում գործում են համայնքային 54 նախակրթարաններ, որտեղ հաճախում են 4969 երեխաներ: Խնդիրը մասամբ մեղմվեց “Օգնություն նախադպրոցական տարիքի երեխաներին” ծրագրի ներդրումով, որի արդյունքում մարզի գյուղական համայնքների թվով 62 դպրոցներում բացվեցին և գործում են դպրոցահեն նախադպրոցական խմբեր: Այդ համայնքների դպրոցներում շարունակվում է նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացումը: Ձևավորված 75 խմբերում ներգրավված են շուրջ 1040 երեխաներ:

5. Օլիմպիադաներ, արդյունքներ

մԷՇՍձՇ³¹³յում 3Բ3Գ՝ձԻՄ՝ձՇ Մ^{3ԵՄ}ԻճճճՁՁՍճճՄՁ

Առարկան	2016-2017 (մասնակիցների թիվը)
Կենսաբանություն	4(գովասանագիր)
Հայոց լեզու	2 (1-ին կարգ) 2 (2-րդ կարգ) 2 (3-րդ կարգ)
Հայ գրականություն	1 (2-րդ կարգ) 1 (3-րդ կարգ) 3(գովասանագիր)
Մաթեմատիկա	2 (3-րդ կարգ)
Ֆիզիկա	--
Քիմիա	3 (3-րդ կարգ) 3 (գովասանագիր)
Աշխարհագրություն	1 (1-ին կարգ) 5 (գովասանագիր)
Պատմություն	3(գովասանագիր)
Ռուսաց լեզու	1 (գովասանագիր)
Անգլերեն	2 (գովասանագիր)
Գերմաներեն	2 (3-րդ կարգ) 3 (գովասանագիր)
ՀԵՊ	1 (1-ին կարգ) 1 (2-րդ կարգ) 3 (3-րդ կարգ) 3 (գովասանագիր)
ՆԶՊ	1 պատվոգիր
Ինֆորմատիկա	--
Ֆրանսերեն	1 (գովասանագիր)

6. Ներառական կրթություն /խնդիրներ, ձեռնարկված միջոցառումներ/

2017-2018 ուստարում մարզպետարանի ենթակայության 24 դպրոցներում ներառական կրթություն են ստանում 1339 աշակերտ:

8. Տնօրենների խրախուսումներ, պարգևատրումներ, տույժեր


Կազմակերպվել և անցկացվել է “Տարվա լավագույն տնօրեն”, “Տարվա լավագույն ուսուցիչ”, “Տարվա լավագույն դաստիարակ” մրցույթների մարզային փուլը: Մարզային փուլի արդյունքում հաղթողներն են ճանաչվել՝ “Տարվա լավագույն տնօրեն” - Գյումրու թիվ 25 հիմնական դպրոցի տնօրենը, “Տարվա լավագույն ուսուցիչ” - Գյումրու թիվ 20 հիմնական դպրոցի անգլերեն լեզվի ուսուցչուհի՝ Օ. Ավետիսյան, “Տարվա լավագույն դաստիարակ” - “Ծիածան” ՀՈԱԿ-ի դաստիարակը՝ Աբրահամյան Արմինե:

9. Զեռուցում, վերանորոգում /խնդիրներ, ձեռնարկված միջոցառումներ/

Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի հիմնանորոգման, վերանորոգման, մարզադահլիճների և մարզահրապարակների կառուցման, վերականգնման և նորոգման աշխատանքները շարունակական են և իրականացվում են ըստ առաջնահերթության:

Խիստ առաջնահերթ հիմնանորոգման կարիք ունեն Հացիկ, Հովունիի, Կապսի, Հովտաշենի, Լուսակերտի, Ձորաշենի, Քարաբերդի, Գեղանիստի, Տուֆաշենի, Ծաղկուտի դպրոցների դպրոցական շենքերը, մի շարք դպրոցների մարզադահլիճները և մարզահրապարակները :

Մարզադահլիճների առկայությունը և վիճակը



Մարզում 66 դպրոցներ՝ 57-ը մարզպետարանի ենթակայությամբ գործող, չունեն մարզադահլիճներ: Այսինքն՝ ոչ բոլոր դպրոցներում են իրականացվում ուսումնական ծրագրի թե՛ բազային, և թե՛ ընտրովի նյութերի մարզաձևերի չափորոշիչային պահանջները:

Կիսով չափ ընկնում է այդ դպրոցների սովորողների շարժողական ակտիվությունը:

Վերջին տարիներին էապես բարելավվել է նաև դպրոցական շենքերի ջերմամատակարարումը: Գնալով նվազում է հեղուկ վառելանյութի վառարաններ օգտագործող դպրոցների թիվը, ավելանում են ջերմամատակարարման համակարգով ջեռուցվող շենքերը: Մարզի 110 հանրակրթական դպրոցական շենքեր ջեռուցվում են լոկալ համակարգով՝ գազով, դիզելային վառելիքով: Էլեկտրաէներգիայով ջեռուցվող դպրոցների թիվը մարզում 35 է:

Դպրոցական շենքերի ջեռուցման պատկերը ներկայացնելիս, ուզում եմ ուշադրություն հրավիրել երկու հանգամանքի վրա.

Մարզում դեռևս կան (թվով 18) դպրոցական շենքեր, որոնք ջեռուցվում են հեղուկ վառելանյութի վառարաններով: Կարծում եմ ավելորդ է ներկայացնել ջեռուցման այս եղանակի անհարմարությունները՝ վառելանյութի ձեռքբերում, վառարանների անվտանգության ապահովում, սանիտարահիգիենիկ պայմաններ և այլն: Մինչև այժմ արվել է հնարավորինս ամեն ինչ, տնօրեններին ցուցաբերվել է համապատասխան աջակցություն վերոնշյալ պայմանների ապահովման համար, սակայն, անհրաժեշտ է ձեռնարկել այս եղանակով ջեռուցումը էլեկտրական կամ ջեռուցման այլ եղանակներով փոխարինելու ծրագրեր:

Մարզում կան գյուղական համայնքներ, որոնք գազաֆիկացված են, սակայն դպրոցական շենքերը հնարավոր չէ ջեռուցել գազով՝ կաթսայատան բացակայության կամ այլ պատճառներով : Դրանք բոլորը ուսումնասիրված են և աշխատանքներ են տարվում խնդիրը որևէ եղանակով (պետական, բարեգործական, ծրագրային) լուծելու ուղղությամբ: Օրինակ Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգը արդիականացնելու նպատակով տարվում են աշխատանքներ «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ»-ի հետ:

10. Դասագրքերով ապահովվածություն, վարձավճարների հավաքագրում

2017-2018 ուսումնական տարվա համար պատվիրվել են 25 անուն 39720 կտոր վարձավճարներով տրվող միջին դպրոցի, 41 անուն 40749 կտոր տարրական դասարանների դասագրքեր, 5 անուն 3900 կտոր ուսումնամեթոդական գրականություն:

2016-2017 ուստարվա վարձավճարների հավաքագրումը և մուտքագրումը համապատասխան հաշվեհամարներին կատարվել է ամբողջությամբ :

11. Համագործակցություն ծնողական համայնքի հետ

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման և իրականացման գործում իր հենքային դերն ու նշանակությունն ունի ծնողական հանրույթը: Վերջինս իր ակտիվ մասնակցությունն ունի 2010 թվականից Շիրակի մարզի հանրակրթական դպրոցներում ներդրված “ՄԱԿ-ի Պարենի” ծրագրի շրջանակներում իրականացվող գործունեության մեջ,

մասնավորապես՝ խոհանոցային աշխատանքները վստահված են ծնողական հանրույթին և բազմիցս արձանագրվել է, որ այն իրականացվում է հավուր պատշաճի:

Դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմում ընդգրկված ծնողներն իրենց անմիջական մասնակցությունն ունեն դպրոցի կառավարման գործընթացում: Ծնողական խորհուրդն իր գործունեությամբ աչքի է ընկնում նաև արտադպրոցական-գիտաճանաչողական միջոցառումների կազմակերպման, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների սոցիալական աջակցության տրամադրման և այլ հարցերում:

Մանկավարժ- ծնող համագործակցությունը գտնվում է ամուր հիմքերի վրա և տալիս ցանակալի արդյունք:

12. Սովորողների արտադասարանական պարապմունքներ, ամառային հանգստի կազմակերպում

2017 թվականի ամառվա ընթացքում 3 փուլով կազմակերպվել է մարզի սոցիալապես անապահով ընտանիքների 7-13 տարեկան 585 երեխաների ամառային հանգիստը Հանքավանի ճամբարներում :

Մարզադահլիճներ չունեցող դպրոցները «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի պարապմունքները կազմակերպում են բացօթյա խաղահրապարակներում, դպրոցի միջանցքներում կամ հարմարեցված սենյակներում: Դպրոցներում առարկայի դասավանդման համար խիստ սակավ է մարզագույքը և մասնավորապես մարմնամարզական գործիքները: Դրանց բացակայությամբ պայմանավորված առարկայի ուսուցումը հաճախ շեղվում է պետական ուսումնական չափորոշիչներից և դասերը հիմնականում անց են կացվում պարզ տիպի շարժախաղերի և մարզական խաղերի տեսքով: Պետական գույքային ծրագրով հանրակրթական դպրոցները վերջին անգամ մարզագույքի որոշակի քանակ ստացել են 2000-2001 ուսումնական տարում:

Նախադպրոցական հաստատությունների երեխաների ու դպրոցականների շրջանում կազմակերպվել և անց են կացվել հանրապետական մարզական ու ռազմամարզական խաղերի, մրցույթների, սպորտլանդիաների և օլիմպիադաների տարածաշրջանային ու մարզային փուլերի մրցումները: Մասնակցելով նշված մարզական միջոցառումների հանրապետական եզրափակիչ մրցումներին մեր թիմերը նվաճել են 7 մրցանակ, որից 2՝ 1-ին, 2՝ 2-րդ և 3՝ 3-րդ:

Դպրոցականների շրջանում կազմակերպված մշակութային միջոցառումներն ու ծրագրերը հիմնականում միտված են եղել մշակույթի տարածմանը և զարգացմանը, մշակութային բարիքների մատուցմանը, ազգային մշակութային արժեքների պահպանմանը, այլ մարզերի հետ համագործակցության խորացմանը:

Կազմակերպվել և անց են կացվել «Երգող Հայաստան» երգչախմբային, «Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի, «Ասմունքի մանկապատանեկան» մրցույթ-փառատոները և «Մշակութային կանգառ» բազմաբովանդակ ծրագիրը՝ դրանց մասնակիցը դարձնելով բազմաթիվ դպրոցականների:

Ապահովվել է Շիրակի մարզի դպրոցահասակ տարիքի ստեղծագործողների մասնակցությունը մի շարք հանրապետական փառատոն-մրցույթների: Այստեղ մեր դպրոցահասակ ներկայացուցիչները արժանացել են պատվոգրերի և խրախուսանքների:

4. Մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տրամադրման և վարձավճարների գանձման գործընթացի մասին:

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և
հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ
Ջորիկ Խաչատրյան*

**ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՍՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ**

Համաձայն մարզի 2017 թվականի հողային հաշվեկշռի, մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 210934.9 հա: Նախորդ տարվա համեմատությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի կազմը էական փոփոխությունների չի ենթարկվել:

Գյուղատնտեսական նշանակության հողերը ըստ հողատեսքերի ունի հետևյալ բաշխվածությունը՝

- վարելահողեր՝ 78160.34 հա (տեսակարար կշիռը՝ 37.06 %),
- բազմամյա տնկարքներ՝ 47.04 հա (տեսակարար կշիռը՝ 0.02 %),
- խոտհարքներ՝ 9697.7 հա (տեսակարար կշիռը՝ 4.6 %),
- արոտներ՝ 112124.75 հա, (տեսակարար կշիռը՝ 53.16 %),
- այլ հողատեսքեր՝ 10905.09 հա (տեսակարար կշիռը՝ 5.16 %),

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 112049.9 հա, որի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նշանակության հողերի կազմում՝ 53.12 % է, իսկ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են՝ 36381.63 հա, որի տեսակարար կշիռը գյուղ. հողերի կազմում՝ 17.24 % է, որոնք ամբողջությամբ ընդգրկված են մարզի համայնքների վարչական սահմաններում:

Ըստ համայնքներից ստացված տեղեկատվության 2017 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների վարչական տարածքներում առկա համայնքային և պետական սեփականության 137520.6 հա գյուղատնտեսական նշանակության հողերից օգտագործման է տրամադրված 47455.3 հեկտարը (34.5 %)՝ 304 մլն 322 հազ. դրամ տարեկան վարձավճարով: Վարձակալության տրամադրված գյուղատնտեսական նշանակության 1 հա հողամասի միջին վարձավճարը կազմում է 6420 դրամ:

Մարզի համայնքների վարչական տարածքներում գտնվող համայնքային սեփականության 105890 հա գյուղատնտեսական նշանակության հողերից օգտագործման է տրամադրված 34580.4 հեկտարը (32.7 %), իսկ պետական սեփականության 31630.6 հեկտար հողերից՝ 12874.9 հեկտարը (40.7 %):

Աղյուսակ 1.

		Համայնքային և պետական սեփականության հողեր	Համեմատությունը 2016 թ. նկատմամբ				
			Տրամադրված է օգտագործման (հա)	Տեսակարար կշիռը հողերի կազմում (%)	Տրամադրված չէ օգտագործման (հա)	2016թ. տրամադրված օգտագործման (հա)	Տարբերու- թյունը (-, +)
Հողատեսքը	Ըստ հողային հաշվեկշռի (հա)						

1	Վարելահող	18493.9	11871.1	64.2	6622.8	11644.1	+227.0
2	Խոտհարք	7092.07	3884.1	54.8	3207.97	2152.9	+1731.2
3	Արոտ	111934.7	31700.1	28.3	80234.6	25648.5	+6051.6
Ընդամենը մարզում		137520.6	47455.3	34.5	90065.3	39445.6	+8009.7

2016 թվականի համեմատությամբ վարձակալության տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողերն ավելացել են 8009.7 հեկտարով, որի արդյունքում 2016 թվականի համեմատությամբ մարզի համայնքների բյուջեներում ամրագրված հողի վարձակալական վճարներից եկամուտներն ավելացել են 9 մլն. 124 հազ. դրամով (ավելացումը հիմնականում պայմանավորված է եղել՝ 227 հա վարելահողերի, 1731 հա խոտհարքների և 6051 հա արոտների վարձակալության տրամադրմամբ):

Չնայած ներկայացված թվային տվյալների դրական տեղաշարժին, պետք է խոստովանել, որ հողերի օգտագործման նշված մակարդակը դեռևս հեռու է բավարար լինելուց և խոսում է ՀՀ հողային օրենսդրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների վերապահված լիազորությունների դեռևս ոչ լիարժեք և արդյունավետ իրականացնելու մասին:

Այսպես, 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառված է 99 840 գլուխ խոշոր և 80845 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Նշված գլխաքանակի արածեցման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը հաստատելու մասին» N 389-Ն որոշմամբ հաստատված նորմերի համաձայն անհրաժեշտ է առնվազն 110000 հա արոտ, մոտավորապես այնքան, որքան արոտներ կան մարզի համայնքների վարչական տարածքներում, այսինքն նշված գլխաքանակի արածեցման համար արոտները պետք է վարձակալության տրամադրվեն ամբողջությամբ:

Մինչդեռ, մարզում առկա 111 934.7 հա արոտներից, ինչպես նշեցի վարձակալության է տրամադրված միայն 31700.1 հեկտարը (28.3 %): Այսինքն արոտների հիմնական մասը մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից օգտագործվում են առանց վարձակալության պայմանագրերի և այդ հողօգտագործումից համայնքային բյուջեները եկամուտներ չեն ստանում:

Համայնքների ղեկավարները մեր կողմից բազմիցս տեղեկացվել են, որ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշմամբ պետական և համայնքային սեփականության արոտների և խոտհարքների օգտագործման տրամադրման կարգը պարզեցվել է և համայնքների ղեկավարներին հնարավորություն է տրվել համայնքային ու պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերից կամ խոտհարքներից օգտվելու պայմանագրերը կնքել պարզ գրավոր ձևով՝ մինչև 3 տարի ժամկետով: Այսինքն, նման դեպքերում հողօգտագործման պայմանագրերի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար պահանջներ չեն ներկայացվում: Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու վճարի չափը սահմանվում է տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

ՀՀ կառավարության նշված որոշման կիրարկումն ապահովելու նպատակով մեր կողմից անհրաժեշտ մեթոդական աջակցություն է ցուցաբերվել համայնքների ղեկավարներին և տրամադրվել են նշված կարգով արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերի օրինակելի ձևերը:

Մարզի համայնքների վարչական սահմաններում առկա և օգտագործման չտրամադրված շուրջ 90 հազար հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալության տրամադրվելու դեպքում, ըստ մոտավոր հաշվարկների համայնքների բյուջեներին կարող է ապահովել շուրջ 120-130 մլն դրամ եկամուտ, որը կարող է նպատակաուղղվել համայնքների զարգացման ծրագրերով նախատեսված տարբեր խնդիրների լուծմանը:

Մակայն այս գործում շատ համայնքների ղեկավարներ թերանում են և արդյունավետ հողօգտագործում ապահովելու և համայնքների բյուջեներին լրացուցիչ եկամուտներ ապահովելու ուղղությամբ գործնական քայլեր չեն ձեռնարկում:

Հարկ եւ համարում նաև նշել, որ մրցութային կարգով հողամասեր վարձակալության տրամադրելու դեպքում հողամասերի հատակագծերը կազմելու համար համայնքների բյուջեներից կատարում են զգալի ծախսեր, նախապատրաստվում և անցկացվում են մրցություններ, կնքվում են համապատասխան պայմանագրեր, սակայն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում այդ պայմանագրերը չեն ենթարկվում նոտարական վավերացման և վարձակալության իրավունքները չեն ներկայացվում պետական գրանցման: Արդյունքում՝ այդ պայմանագրերը համարվում են ոչ օրինական, իսկ հողօգտագործումը՝ ինքնակամ: Նման օգտագործումը ՀՀ օրենսդրությամբ համարվում է հողամասի օգտագործման տրամադրման կարգի խախտում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Օրենսգրքի համաձայն առաջացնում է պատասխանատվություն, ինչպես հողօգտագործողի, այնպես է պաշտոնատար անձի նկատմամբ: Առանց իրավունքների պետական գրանցման մարզի համայնքներում վարձակալության իրավունքով օգտագործվում է 2119 հա վարելահող և գանձվում են վարձավճարներ: Այդ համայնքներն են՝ Լուսադբյուր՝ 105.1 հա, Ձիթհանքով՝ 132.71 հա, Քարաբերդ՝ 98 հա, Սարակապ՝ 54.63 հա, Սպանդարյան՝ 55.11 հա, Փոքրաշեն 98.96 հա, Կարմրաքար՝ 54.46 հա, Բենիամին՝ 76.4 հա, Հայկաձոր՝ 255.55, Բասեն՝ 85.93, Արփի խոշորացված համայնք՝ 810 հա և այլն:

Առանձին համայնքներում համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը, այդ թվում նաև վարելահողերը, վարձակալության են տրամադրված մասնակիորեն, իսկ մնացած հողամասերի օգտագործման տրամադրման համար տարիներ շարունակ մրցություններ չեն կազմակերպում և լիարժեք ու արդյունավետ հողօգտագործում ապահովելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվում:

Վարելահողերի և խոտհարքների օգտագործման տրամադրման ցածր մակարդակը առանձին համայնքներում ունի նաև որոշակի օբյեկտիվ պատճառներ: Այդ հողամասերի զգալի մասը գտնվում են մեծ թեքությունների վրա, օգտագործման ընթացքում խիստ էրոզացվել են և համապատասխան միջոցների բացակայությամբ պայմանավորված կոլտուրտեխնիկական, ագրոտեխնիկական և այլ գյուղատնտեսական միջոցառումներով հողատեսքերի որակական հատկանիշները հնարավոր չէ վերականգնել, կամ հողամասերում ընթանում են ճահճացման երևույթներ:

Համայնքների բյուջեներում այդ հողատարածքների համար նախատեսվում են հողի վարձակալական վճարներից եկամուտներ, սակայն տարիներ շարունակ այդ հողատեսքերը չեն վարձակալվում, համայնքների բյուջեներին համապատասխան եկամուտներ չեն բերում և չեն ապահովում սեփական եկամուտների կատարման առաջադրանքները:

Նման խնդիրներ ունեցող համայնքների ղեկավարները մեր կողմից բազմիցս տեղեկացվել են, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 1066-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով, մարզպետի կողմից ստեղծված գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում, համայնքի ղեկավարի կողմից ընդունվող որոշմամբ, այդ բարձրարժեք հողատեսքերը կարող են փոփոխվել ավելի ցածրարժեք հողատեսքերի և սահմանված կարգով տրվել վարձակալության:

Հողի վարձակալական վճարների հավաքագրում

2017 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների բյուջեներին ամրագրված 221մլն 927 հազ. դրամ հողի և գույքի վարձակալական վճարների դիմաց փաստացի հավաքագրվել է 175 մլն 25 հազ. դրամ, կատարման ցուցանիշը՝ 78.9 %: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է հավաքագրվել 24 մլն. 339 հազ. դրամ հողի և գույքի վարձավճար կամ նախորդ տարվա փաստացի հավաքագրվածի նկատմամբ ապահովել է 16.2 % աճ: Միայն հողի վարձակալական վճարների հավաքագրման մասով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է հավաքագրվել 18մլն. 67 հազ. դրամ (աճը՝ 14.6%) Համայնքային սեփականության հողերի մասով հողի վարձավճարների հավաքագրման մակարդակը կազմել է 70.1 %, իսկ պետական սեփականության հողերի մասով՝ 165.6 %:

Ընթացիկ տարվա 8 ամիսների վարձակալական վճարների պլանային ցուցանիշի նկատմամբ պակաս հավաքագրված 46 մլն 902 հազ. դրամից 38 մլն 800 հազ. դրամը առաջացրել է Գյումրի համայնքը (20մլն. 502 հազ. դրամ) և Ախուրյանի տարածաշրջանի համայնքները (18մլն. 368 հազ. դրամ), իսկ մնացած 8մլն 102 հազ. դրամը՝ մարզի մնացած 45 համայնքները:

Մարզի նախկին տարածաշրջաններից և խոշորացված համայնքներից ընթացիկ տարվա 8 ամիսներին հողի վարձակալական վճարների հավաքագրման գծով ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ախուրյանի տարածաշրջանում (57.3 %), որի տեսակարար կշիռը մարզի համայնքների բյուջեներին ամրագրված վարձակալական վճարների հանրագումարում կազմում է 35 % է, իսկ քաղաքային համայնքներից՝ ամենացածր ցուցանիշը արձանագրվել է Գյումրի համայնքում՝ 71.9 %:

Մարզի թվով 21 համայնքներ ընթացիկ տարվա 8 ամիսներին չեն ապահովել վարձակալական վճարների հավաքագրման առաջադրանքի 50%-ը (Ախուրյանի տարածաշրջան 12 համայնք, Արթիկի տարածաշրջան՝ 5 համայնք, Անիի տարածաշրջան՝ 4 համայնք), իսկ թվով 8 համայնքներում վարձավճարների հավաքագրման մակարդակը չի գերազանցել 20%-ը (այդ համայնքներն են՝ Այգաբաց, Բայանդուր, Հովունի, Գեղանիստ, Հովտաշեն, Սարատակ, Ջիթհանքով, Մարակապ):

Մարզի թվով 21 համայնքներ հողերի վարձակալական վճարների հավաքագրման գործում ապահովել են 100 և ավելի բարձր տոկոսի ցուցանիշներ, որից Ախուրյանի տարածաշրջանում՝ 3 համայնք, Արթիկի տարածաշրջանում՝ 12 համայնք, Անիի տարածաշրջանում՝ 3 համայնք և խոշորացված՝ Ամասիա, Արփի և Աշոցք համայնքները:

Համայնքների բյուջեների կատարման վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մարզի առանձին համայնքներում հողօգտագործման պայմանագրերով նախատեսված վարձատուի և վարձակալի իրավունքների ու պարտավորությունների կատարման հարցում կան տարբեր մոտեցումներ և ընկալումներ:

Այլապես, ինչպես բացատրել այն իրողությունը, որ աշխարհագրական նույն դիրքը, բնակլիմայական նույն պայմաններն ու բերքատվության նույն ցուցանիշներն ունեցող երկու հարևան համայնքներից մեկում հողօգտագործողները բարեխղճորեն են կատարում վարձակալի իրենց պարտավորությունները, իսկ հարևան մյուս համայնքներում՝ ոչ:

Օրինակ. Ախուրյանի տարածաշրջանի Մարմաշեն և Հովունի համայնքներում վարձակալական վճարների հավաքման մակարդակը չի գերազանցել 40.0 %-ը, իսկ հարևան՝ Վահրամաբերդ կամ Մայիսյան համայնքում ապահովել են բարձր ցուցանիշներ, Անիի տարածաշրջանի Իսահակյան, Հայկաձոր և Բագրավան համայնքներում ապահովվել է 100-ից բարձր ցուցանիշ, իսկ հարևան Մարակապ կամ Լուսաղբյուր համայնքներում՝ 30 տոկոսից ցածր:

Վարձավճարների գանձումների գործընթացն ըստ համայնքների վերլուծելիս ակնառու է դառնում նաև այն փաստը, որ վարձավճարների հավաքագրման բարձր ցուցանիշներ են արձանագրվում հատկապես այն համայնքներում, որտեղ գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման մակարդակը բարձր է և վարձակալության իրավունքները ենթարկված են պետական գրանցման:

Համայնքների ուշադրությունը ուզում եմ հրավիրել ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված հողամասի վարձակալության մասին պայմանագրի 11-րդ կետի վրա, համաձայն որի «Վարձակալման ընթացիկ վճարումները վարձակալի կողմից մուծվում են հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Առաջին վարձակալական վճարումները կատարվում են որպես կանխավճար, ոչ ուշ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրվա ընթացքում: Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

Նույն պայմանագրի 22-րդ կետի համաձայն պայմանագիրը կարող է վարձատուի կողմից միակողմանի վաղաժամկետ լուծվել, եթե՝ վարձակալը 3 ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը:

Առաջարկում եմ համայնքների ղեկավարներին, ոչ բարեխիղճ վարձակալների նկատմամբ կիրառել ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունները, վաղաժամկետ միակողմանի դադարեցնել պայմանագրերը և դրանք մրցույթով տրամադրել այլ հողօգտագործողների:

